

**Հրանուշ Խառատյան,
ազգագրագետ, պատմական գիտությունների թեկնածու**

**Մ. Ռ. ԳԱՔՐԻԵԼՅԱՆԻ ԵՎ Ա. Ա. ԴԱՔԱՂՅԱՆԻ “ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ, ԱՌԵՎՏՈՒՐԸ ԵՎ
ԷԹՆԻԿՈՒԹՅՈՒՆԸ ՍԱՅՄԱՆԱՄԵՐՁ ԳՈՏՈՒՄՄ” /ազգագրական հետազոտություն
Հայաստանի Տավուշի մարզում/ աշխատանքի մասին**

ԿԱՐԾԻՔ

Մ.Գաբրիելյանի և Ա.Դաքաղյանի վերլուծությունը մերօրյա Հայաստանի հյուսիսային հատվածի սահմանամերձ բնակչության մասին Հայաստանի այսօրվա զարգացումների շուրջ արվող հետազոտությունների շարքում ուշագրավ է ինչպես թեմատիկ առանձնահատկությամբ /Առևտուր, տնտեսություն, էթնիկություն/, այնպես էլ՝ հարցադրումների ընդգրկվածությամբ: Աշխատանքը շարադրված է հիանալի ակադեմիական լեզվով, ինչը սակայն, ի պատիվ հեղինակների, ամենևին չի նվազեցնում ոչ նյութերի, ոչ շարադրանքի “հյուսվածությունը”:

Հեղինակները մանրամասն վերլուծում են “սահմանամերձ” հասկացությունը, և ցույց են տալիս, որ գործող ցուցանիշների համաձայն “*Ըստ 2002թ. համալիր ծրագրին կից բնակավայրերի ցանկի՝ Տավուշի մարզում այս չափանիշներին համապատասխանող բնակավայրերի թիվն ամենամեծն է՝ 59-ից 42 գյուղ համարվում են սահմանամերձ: Դրանցում ապրում է մարզի բնակչության կեսից ավելին, իսկ գյուղական բնակչության՝ 72%-ը*”: Այսպիսով ընտրված խնդրի շուրջ Տավուշի մարզում հետազոտությունը, թերևս, ամենաարդարացվածն է:

Հեղինակները յուրաքանչյուր գլուխ սկսում են յուրատեսակ, տվյալ գլխի նյութին վերաբերող նախաբանով, արված է Տավուշի մարզի համառոտ պատմական ակնարկ, ինչ զգալիորեն “պարզեցնում է” նյութի հետագա շարադրանքի ընկալումը:

Տավուշի մարզի պատմական ակնարկում հեղինակները մեծ նրբությամբ ցույց են տալիս Ռուսաստանի կազմում հարավային կովկասի իրավիճակային և գործառույթային սահմանագծումների տրամաբանությունը, հիմնավորելով “սահման” հասկացության հանդեպ տեղի բնակչության իրավական ու փաստացի ընմբռնումների ձևավորման բարդությունները: Սահմանի վերաբերյալ Տավուշի մարզի բնակչության պատմական անցյալից եկող պատկերացումները վերջին մի քանի

հարյուրամյակներում չէին կարող հստակ իրավա-վարչական փորձ առաջացնել: Դեռևս հարյուրիսուն տարի առաջ Ռուսական կայսրության ներքին վարչական սահմանագծումների տրամաբանությամբ ամենակարևորը՝ բուն կառավարումը և հարկահավաքությունը մաքսիմալ հարմարեցվել էր շփումների ակտիվությունն ապահովող սկզբունքին /հեշտ լինի վերահսկումը/, ուստի որևէ կապ չունեի տվյալ տարածքի էթնիկ բախշման սկզբունքին: Նույն տրամաբանությունը կիրառվում էր նաև Հարավային Կովկասում: Այլևայլ գործառույթներ ունեցող վարչական մարմիններն ունեին տարբեր “սահմանագծումներ”, օրինակ՝ դատականը, տնտեսականը... և այլն... Սրանք վարչական գրասենյակներ էին, որոնց գործառույթների իրականացման շրջանը կարող էր չհամապատասխանել գավառների սահմանագծերին /կարևորը նահանգայինն էր/, որոնք տարբերվում էին վարչական սահմանագծումներից՝ գլխավոր մարմին ունենալով Թիֆլիսում, Բաքվում, Ելիզավետպոլում, Բաթումում, Երևանում, Կարսում, բայց տվյալ ոլորտը կառավարելով մի շարք գավառներում /օրինակ՝ Ելիզավետպոլից՝ նաև Երևանի գավառի որոշ բնակախմբեր, Երևանից՝ նաև Թիֆլիսի և այլն/: Բնականաբար, կրթական գործառույթն իրականացնող վարչական մարմինը մաքսիմալ պիտի մոտենար էթնիկ կազմի քարտեզին, ուստի *“արդեն ոչ թե տնտեսական վարչարարության, այլ էթնիկ ժողովրդագրության պահանջներից էր բխում 1876-1890թթ. Կովկասյան ուսումնական օկրուգի ժողովրդական ուսումնարանների երրորդ դիրեկցիայի կազմում Երևանի և Ելիզավետպոլի նահանգների ու Կարսի մարզի միավորումը Ելիզավետպոլ կենտրոնի շուրջ (Էվոյան 1986:207-208, 215-216)”*... Ընդհանուր առմամբ *“Նահանգները ստորաբաժանվում էին նույն վարչա-աշխարհագրական սկզբունքով՝ գավառ, որը տարածվում էր գավառական կենտրոնի շուրջ այնպես, ինչպես նահանգը՝ նահանգային կենտրոն հանդիսացող քաղաքի: Ավելի ցածր վարչական միավորի՝ “ոստիկանական տեղամասի” էթնիկական նկարագիրն արդեն ձգտում էր միատարրության, իսկ նվազագույն վարչական միավորը՝ գյուղական հասարակությունը տասից ինը դեպքերում ներկայացնում էր նույն ազգության ներկայացուցիչներին: Գյուղը նույնպես վարչական միավոր էր, սակայն՝ դրանց երբեմն խիստ փոքր չափերի պատճառով ռուսական կայսրական վարչարարության հիմնական միավոր էր գյուղական հասարակությունը: “ Արդյունքում քսաներորդ դարի սկզբին այդ տարածաշրջանի բնակչության բաժանարար գծերի՝ “սահմանային” ընկալումը զգալիորեն հեղիեղուկ էր: Այնուամենայնիվ, քսաներորդ դարի երկրորդ տասնամյակի վերջում, երբ առաջացել էր պետական ձևավորումների հնարավորությունը, ապագա սահմանների վերաբերյալ բոլոր հնարավոր ակնկալիքները էթնիկական էին. “*Էթնիկական բաժանարար գծերը շարունակում էին մասնակցել տարածքի կազմակերպմանըՄՆ և “Յենց այդ բաժանարար գծերի վրա էլ տեղի ունեցան 1905-1906 և 1918-1920 թթ միջէթնիկ**

բախումները, որոնց արդյունքում Անդրկովկասի բնակչության էթնիկական սահմանները կարևոր փոփոխություններ կրեցն” տեղի ունեցան ոչ միայն կոտարածներ, այլև՝ էթնիկ սկզբունքով վերաբնակեցումներ:

Յեղիևակներն անդրադառնում են հետագա՝ խորհրդային շրջանի բավական պայմանական սահմաններին՝ ցույց տալով դրանց առկա և/կամ հնարավոր փոփոխությունները: Որպես կանոն, դրանք տեղի էին ունենում տնտեսական նպատակահարմարությունների թելադրանքով կամ պատճառաբանությամբ: Բոլոր դեպքերում, դրանք էթնիկ սահմանների վրա տեսանելի ազդեցություն չեն ունեցել:

Այսօր նույնպես “սահման”, “սահմանային գիծ” արտահայտություններն ու նորմերը հետազոտության համար ընտրված տարածքի համար դեռևս վերջնական ու պարզեցված չեն: Իրականում դա զինադադարի գիծ է, և հեղիևակները հենց առաջին գլխի նախաբանում ցույց են տալիս, որ տարտամ “զինադադարի գիծ” արտահայտությունը միանգամից գծանշում է առկա կամ հնարավոր հարաբերությունների ոչ ստանդարտ վիճակը. Դա դասական սահմանային գոտի չէ, դա զինադադարային սահմանային գոտի է, որի փոփոխության վերաբերյալ կարող են նկատառումներ լինել, և բնակչությունը համապատասխանաբար իր “սահմանին” կարող է վերաբերել որպես խաբուսիկ, փոփոխման ենթակա... Յենց այս պատճառով հեղիևակները նկատում են, որ “Այս իրադրությունը Տավուշում սահմանի բնութագրման առումով հակիրճ բանաձևելով՝ հարկ ենք համարում նկատել, որ պատճառահետևանքային կապ կա <սահմանամերձ գոտի> հասկացության ներկա ընդարձակ ընկալման և հետբախումնային իրադրության միջև”:

Տավուշի սահմանամերձ գոտին, ի տարբերություն Ադրբեջանի համապատասխան սահմանամերձ գոտու, “գրեթե ամբողջությամբ հայտնվել էր Ադրբեջանի ռազմական գործողությունների գոտում”, ուստի “մարզում <սահմանամերձություն>-ը երկար ժամանակ համարժեք է դիտվում <պատերազմից տուժած> լինելուն”՝ համապատասխան նյութական կորուստներով /հողեր, արոտավայրեր.../: Թվում էր, թե տարածքի բնակչությունը բոլոր բարոյական իրավունքներն ուներ իր հանդեպ ոչ ստանդարտ պետական քաղաքականություն սպասելու: Իրականում, ինչպես նրբորեն նկատում են հեղիևակները, Հայաստանում “սահմանամերձ” անվամբ իրականացվող ծրագրերը ոչ միշտ են համապատասխանում “սահմանամերձ”-ի իրավական սահմանմանը. “Վերջերս (2006թ.) ՀՀ ԱԳՆ և <Հայաստան> համահայկական հիմնադրամի հովանավորությամբ սկսված <Սահմանամերձ գյուղերի զարգացման> ծրագրի մեջ ներառվել է նաև Տավուշի մարզից բնակավայրերի

խումբ՝ կլաստեր, որի մեջ մտնող վեց բնակավայրերից սահմանին ամենամոտը՝ Ազատամուտը, հեռու է գինադադարի գծից 2 կմ, իսկ կլաստերի կենտրոն հաշթառակը՝ 15 կմ: Ակնհայտ է, որ ձևավորելով երկաթուղու անմիջական հարևանությամբ գտնվող գյուղախումբ, ծրագրի հեղինակներն ավելի գործնական, քան <գաղափարական> կամ խնամատար մոտեցում են ցուցաբերել: Վերոհիշյալ <ամենասահմանամերձ> 23 գյուղերից այս տնտեսական ծրագրում ոչ մեկն ընդգրկված չէ, իսկ Տավուշի սահմանամերձ 13 գյուղերի ԱԳՆ տարածած ցուցակում, որով վերոհիշյալ զարգացման ծրագիրը առաջնորդվելու է նաև ապագայում, տեղ ունեն դրանցից միայն 4-ը: Սա հանգեցնում է հետևության, որ <սահմանամերձ>-ի ներսում տնտեսական չափանիշերն սկսել են գերիշխել հայրենասիրականի նկատմամբ, <գյուղախնամ> նպատակն աստիճանաբար փոխակերպվում է <գյուղի զարգացման> ծրագրի, որից առավել կարիքավորներն առայժմ դուրս են մնում:

Ակնհայտ է, որ պետական քաղաքականության իրականացման ընթացքը ոչ միշտ է համապատասխանում սահմանված քաղաքականությանը՝ այստեղից բխող բոլոր հետևանքներով, այդ թվում՝ տնտեսական, հասարակական, դրացիական, ազգային-էթնիկական և այլն, որոնց մեջ նաև՝ հարևան երկրների ու ժողովուրդների հետ հարաբերություններում: Սա, թերևս, ունի իր լավ ու վատ կողմերը, որոնցից առանձնացնենք հարևանների հետ հարաբերությունների կարգավորման հնարավորությունների ինքնակարգավորման մեխանիզմները, ինչը լայնորեն քննարկված է սույն աշխատանքում:

Իրականում սա աշխատանք է էթնիկ պատերազմի ընթացքում և դրանից անմիջապես հետո ազատականացող տնտեսության և ժողովրդավարացող երկրի ծայրամասի բնակչության սոցիական, տնտեսական, քաղաքական, մշակութային և, եթե կուզեք, էթնիկական գործընթացների մասին:

Իրենց ընտրած թեման հիմնավորելով, Գաբրիելյանն ու Դաբադյանը հղում են նաև էթնիկության հայտնի տեսաբան Ռ. Բրուքեկերի՝ 1990-ականների առաջին կեսին հետսոցիալիստական երկրների ուսումնասիրության արևմտյան փորձի ամփոփումից բխած եզրակացությունը, ըստ որի “տարածաշրջանների և երկրների <ազգայնականացումը> պետք է դիտել <շուկայականացման> և <ժողովրդավարացման> գործընթացների հետ եռամիասնության մեջ”: Սրանով հեղինակները լրացուցիչ հաստատում են գտնում իրենց այն տեսակետի, ըստ որի “տնտեսությունը, առևտուրը և էթնիկությունը հավասարապես կարևոր են և փոխկապակցված”: Լիովին համաձայնելով կարևորության և փոխկապակցվածության

հնարավորությանը, կարծում եմ, որ այս եռամիասնության երրորդ բաղադրիչն ավելի կոնսերվատիվ է, ինչը և ապացուցվում է հետազոտողների կյուբերով: Ընտրված տարածքի բնակչությունը, սկզբունքորեն մնալով հայկական միջին ստանդարտի շրջանակներում, թերևս սահմանային գոտու բնակչության “Էթնիկության” թելադրանքով պակաս է ընդգրկված “շուկայականացման” և “ժողովրդավարացման” գործընթացներում: Աշխատանքում հետևողականորեն ցույց է տրվում հարևանների հետ նրանց առևտրա-տնտեսական կապերի բնույթը. դրանք հաճախակի են, բայց՝ զգալիորեն “զուսպ”, և այդ “զսպվածությունը” “վերահսկվում է” նրանց էթնիկության գիտակցությունից: Աշխատանքում ուղղակիորեն այս երևույթի հաստատումը չկա, բայց անուղղակիորեն զգացվում է այն բանից, որ տնտեսական ծրագրերը տևական չեն, արագ ու հապճեպ են կատարվում, միշտ առկա է խզման վտանգը: Մյուս կողմից, սահմանային լինելու հանգամանքը “զսպում” է նաև տեղական, ներէթնիկ նախաձեռնությունները: Մարդիկ գերադասում են ակտիվ տնտեսվարողներ մնալ Ռուսաստանում, քան՝ ներդրումներ անել անորոշ ապագայով սահմանային գոտում: Ուշագրավ է, որ հեղինակների կողմից հետազոտված ադրբեջանական Սադախլո գյուղում ներգյուղական ներդրումներն ավելի համարձակ են: Թվում է, որ այստեղ նույնպես առկա է էթնիկության որոշ արձագանք. Սադախլոյի ադրբեջանցիների ընկալումներով հայ-ադրբեջանական լարվածությունը հազիվ թե ուղղակիորեն ազդի Վրաստանում՝ երրորդ երկրում գտնվող ադրբեջանական գյուղի վրա: Վրաստանում գտնվելու փաստով ադրբեջանցիներն իրենց ավելի ապահով են զգում, ի տարբերություն Հայաստանում գտնվող, բայց Ադրբեջանի հետ սահմանակից հայկական բնակավայրերում, զուցե նաև՝ Հայաստանի հետ սահմանակից, Ադրբեջանում գտնվող ադրբեջանական բնակավայրերում: Եթե տեսականորեն ենթադրենք, որ Հայաստանի և Ադրբեջանի այս գոտում կարող էին լինել երրորդ էթնիկ համայնքի բնակավայրեր, կարելի կլիներ ենթադրել, որ նրանք իրենց ավելի ապահով պետք է զգային, քան հայերը Հայաստանում և ադրբեջանցիներն Ադրբեջանում: Ակնհայտ է, որ ավելի պահպանողական “էթնիկությունը” կարող է տևականորեն “մասնակցել” կամ “մերժել” տնտեսության ազատականացմանն ու քաղաքական ժողովրդավարեցմանը, եթե վտանգը սպառնում է էթնիկությանը: Շուկայի ազատականացումը ֆինանսական ներդրումներ է ենթադրում, իսկ այդ ներդրումների ճակատագիրն անորոշ է:

Եթե դատելու լինենք խաղաղության շրջանի առևտրա-տնտեսական հարաբերություններով, ապա, ինչպես և նկատում են հեղինակները, խորհրդային շրջանի հայ-ադրբեջանական և հայ-վրացական առևտրա-տնտեսական հարաբերություններն ավելի “էթնիկական” էին, քան՝ “ազգային-պետական” /այս

տերմիններին ստորև դեռևս կանդրադառնամ/: Յնարավոր է, որ այս կարգի հարաբերությունները թելադրված էին ոչ միայն ռուսական կենտրոնամիտությամբ, ոչ միայն ծայրամասային հանրապետությունների տնտեսական կապերը չխրախուսող ԽՍՀՄ քաղաքականությամբ, այլև էթնիկ հարաբերությունների անորոշությամբ: Իսկ մասնավոր տնտեսական հարաբերությունները, որոնք կենտրոնացված էին մանր առևտրի շուրջ, էթնիկական էին, բայց ծավալային և տևական չէին, որով ծայրահեղ իրավիճակներում այդ հարաբերությունների մեջ ընդգրկված տնտեսվարողները կարող էին իրավիճակից դուրս գալ նվազագույն կորուստներով: Բոլոր դեպքերում աշխատանքը հարցականներ է դնում, որոնց պատասխանները վերլուծություններ են պահանջում:

Աշխատանքի երկրորդ՝ “ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ. ԱՆՅՅԱԼԻ ԵՎ ԱՊԱԳԱՅԻ ՄԻՋԵՎ” գլուխը բնութագրում է նախ և առաջ անցյալի էթնիկ տնտեսական կապերը, որոնք իրականում սահմանափակվում են պարզունակ առևտրաշրջանառությամբ:

Առևտրաշրջանառությունն, անշուշտ, ընդգրկում էր հարևան բնակչության տնտեսության արդյունքները: Յայերի ապրանք ձեռք բերելու կարևոր աղբյուրը ադրբեջանցիների շրջիկ այցելություններն էին, սակայն “բացի առևտրի այս շրջիկ եղանակներից, նույն ապրանքը և դրանից շատ ավելին հայերին հասանելի էր Ղազախի և Թովուզի ամենօրյա շուկաներում, ուր հայերի մեծամասնությունն այցելում էր կիրակի օրերին”: Թովուզի երկու շուկաներում էլ “սեզոնին հավասարաչափ լավ էին ներկայացված միրգն ու բանջարեղենը՝ ինչը և գրավում էր հայերի մեծամասնությանը: Աշնանը շուկան դառնում էր նաև ոչխարի, գառների ու բրդի վաճառքի վայր, ընդ որում՝ հայերը վաճառող կողմն էին”: Միաժամանակ գրեթե ողջ սահմանամերձ գոտում հիմնական շինարարական աշխատանքները կատարում էին հայ արհեստավորները, ինչը, ըստ հեղինակների բանասացների, այս գյուղերից արտագնացության ցածր մակարդակի պատճառներից էր: Առանձին արհեստավորներ ու բրդագողներ տարիներ շարունակ աշխատել են ադրբեջանական գյուղերում: ... Այնուհանդերձ առևտրաշրջանառությունը մանր բիզնես էր և ուղղակի տնտեսական գործընկերություն չէր ենթադրում:

Բոլոր դեպքերում Յայաստանի ընդհանուր տնտեսական անկումը և հիշյալ առևտրաշրջանառության ու հայ արհեստավորների աշխատանքի շուկայի վերացումը հանգեցրին արտագնացության և արտագաղթի: Անցյալում համարյա արտագնացություն չունեցող այս տարածքում այսօր Էմիգրանտների տեսակարար

կշիռը զգալորեն բարձր է երկրի միջինից: Արտագաղթը կամ խոպանը Տավուշի մարզում արդեն դառնում է ավանդույթ՝ միաժամանակ ազդելով տարածքի տնտեսական մշակույթի ձևավորումներին: Որոշ գյուղեր “մարդաթափ” են լինում:

Հեղինակները դիտարկում են արտագաղթի մի շարք պատճառներ՝ սակավահողությունը կամ եղած հողերը մշակելու անհնարինությունը /ինչպես ադրբեջանական վերահսկողության տակ գտնվելու, այնպես էլ՝ աշխատուժ չունենալու պատճառով, վախը... Մասամբ ազդում է նաև “ռուսաստաններում” հաջողության հասնելու փաստերը... Ուղղակիորեն սահմանամերձության հանգամանքով է պատճառաբանված ոռոգման ջրագրկումը,- այդ ավազանները պատերազմական գործողությունների ընթացքում վնասվեցին.... Բոլոր դեպքերում այս կարևոր սահմանամերձ գոտու ժողովրդագրական կազմը զգալիորեն փոխվել է, իսկ տնտեսական հարաբերությունների բնույթը՝ ոչ: Ավելին, երկրների բնակչության ինտենսիվ առևտրական հարաբերությունները դարձան այն կարևոր օղակը, որը ցայսօր քննարկվում է որպես հարաբերությունների կարգավորման հնարավոր փորձ՝ վերածվեց սահմանային առևտրի շուկայի: Հենց այս հարցն էլ բավական մանրամասն քննարկվում է աշխատանքի երրորդ գլխում՝ “ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ՇՈՒԿԱՆ ԵՎ ԱՌԵՎՏՈՒՐԸ”:

Հեղինակները ներկայացնում են աշխարհի՝ սահմանային առևտրի փորձն ընդհանրապես, բախումնային տարածքներինը՝ մասնավորապես: Մեր տարածաշրջանի համար դիտարկումը կատարվում է Բագրատաշեն-Սադախլո գյուղերի միջև ընկած շուկայի օրինակով, մի երևույթ, որ զգալիորեն ալեկոծել է ինչպես երեք երկրների տնտեսական ներքին հարաբերությունները, այնպես էլ՝ էթնիկական հարաբերությունները:

Զգալի մանրակրկիտությամբ վերլուծելով այս շուկայում հայտնվող ապրանքների ելման աշխարհագրության հնարավորությունը և մուտքի երկրների պահանջարկը, հեղինակները դրանով ինքնին վկայում են ապրանքաշրջանառության աշխարհագրությունը /Ռուսաստան, Իրան, Թուրքիա, որից Հայաստան ներկրվող ապրանքի տեսականին գլխավորապես հագուստ էր (Թուրքիայից), վառելանյութ, միրգ, բանջարեղեն, թեյ, ձկնկիթ (Ադրբեջանից), ու մեծաքանակ այլ ապրանք, որի հիմնական ելակետը Ռուսաստանն էր՝ այլուր, ծխախոտ, կոնֆետ (սաև՝ Ուկրաինայից):

Հայերն այնտեղ վաճառում էին իրանական ապրանք և Հայաստանի պահեստների մնացած պարունակությունը, ընդհուպ՝ հին հագուստ, բայց նաև՝ տեղական

արտադրանք: “*Հայաստանից Ադրբեջան էր արտահանվում կարտոֆիլ (Տաշիր, Գեղարքունիք), ապխտած ձուկ, ձկան պահածո (Գեղարքունիք, Արարատ), խոշոր եղջերավոր անասուն (Տավուշ, Լոռի), կոնյակ, էլեկտրական լամպեր, քարհատ սկավառակներ, երշիկեղեն (Երևան), կոշիկ, հավի միս, հանքային ջուր (Դիլիջան): Դրանց մի մասի ճանապարհը կարճ էր՝ շուկայի հայ կամ ադրբեջանցի վաճառողից մոտակա խանութ կամ գևորդի տուն: Մի մասը Վրաստանից դուրս չէր գալիս, կարող էր սպառվել միայն մերձակա ադրբեջանական գյուղերում: Սակայն նշված ապրանքի մեծ մասը վերավաճառվում էր ավելի լայն աշխարհագրությամբ: Ադրբեջանցի հեղինակները նշում են հայկական կոնյակի, ձկան պահածոների հայտնաբերման ու առգրավման դեպքեր Բաքվում ու Գյանջայում: Նրանց դիտողությամբ՝ որքան Բաքվից հեռու, այնքան ավելի մեծ էր հայկական արտադրության ապրանք հայտնաբերելու հավանականությունը, հատկապես՝ հյուսիս-արևմտյան Ադրբեջանում (Juvarly and Shabanov 2004:231-232)Մ: Հայաստանից Թուրքիա 1999թ. կիսապաշտոնական արտահանման տվյալներում առաջին հորիզոնականը զբաղեցնում էին հում կաշին և մորթիները, կազմելով ամբողջ արտահանման 72%-ը: Այս փուլի մյուս առանձնահատկությունը շուկայում ռուսական ռուբլու գերիշխանությունն էր ազգային նորաստեղծ արժույթների և ԱՄՆ դոլարի նկատմամբ: Եթե առաջինը միանգամայն հասկանալի է որպես ռուբլու գոտու ազդեցության ժառանգություն, ապա դոլարի թույլ դիրքերը սահմանային շուկայում վկայում են անդրսահմանային հովեկային առևտրի համեմատ Սադախլոյի պահպանողականությունը և կապվածությունը տարածաշրջանի նախկին <տիրոջ> տնտեսությանը: Այս կախվածությունն ավելի ևս նկատելի էր 1990-ականների վերջին հարավկովկասյան երկրների մայրաքաղաքների շուկաների լիակատար դոլլարացման պատկերի համեմատությամբ:*

Չեղինակները եզրակացնում են, որ Սադախլուն իր գոյության առաջին տասնամյակում մնում էր Հարավային Կովկաս - Ռուսաստան, այսինքն՝ նախկին խորհրդային տնտեսական կապերը շարունակող շուկաների ցանցի մի մասը:

Սահուն անցում կատարելով Հայաստանի բնակչության ընդհանուր և լայնածավալ առևտրային գործունեությանը, որը թելադրված էր սահմանները փակ երկրի պետական առևտրաշրջանառության բացարձակ անկմամբ և երկրի ներսում արտադրական ձեռնարկությունների անգործությամբ, հեղինակները դիտարկում են առևտրական մշակույթի նոր ձևավորումները. “*Եթե առևտուրն ընդհանրապես պատկերացնենք մի քանի միմյանց վրա փռված ցանցերի տեսքով, նկարագրված գյուղահեն առևտուրը հայտնվեց ավելի ընդարձակ ու կազմակերպված քաղաքահեն ցանցի ստվերում՝ պահպանելով դրանից իր կախվածությունը*”:

Այդ համատարած առևտուրը տնտեսվարում չէր, դա, ինչպես դիպուկ բնութագրում են հեղինակները, օրվա հաց վաստակելու միջոց ու հնարավորություն, գոյատևման շանս էր: Սադախլույի շուկայով հայաստանցիները չէին հարստանում, նրանք նույնիսկ միջակ չէին դառնում, նրանք ուղղակի գոյատևում էին: Բազում էին առևտրականները, դա նման էր իր տնամերձում հացահատիկ կամ կարտոֆիլ աճեցնելուն, այքման, որքան իր ընտանիքին կկերակրեր:

Յեղիևակները ներկայացնում են շուկայի նկարագիրը, որը բազում թելերով կապված էր ոչ միայն Երևան-Թիֆլիս-Բաքու կենտրոնների հետ, այլև՝ Թուրքիա, Իրան, Ռուսաստան:

Բնականաբար դրա շուրջ և ձևավորվել էր նաև առևտրի սպասարկողների հոծ զանգված /սևնդի կետեր, բեռնակիրներ, ճանապարհորդական սպասարկում, առաքում.../, որը նույնքան բազմեթևիկ է: Բուն առևտրի մեջ, սակայն, ներգրավված էին գլխավորապես ստորին սոցիալական շերտերը. Այն կազմակերպողները չեն երևում հետազոտության մեջ, ինչպես և լինում է սովորաբար մարդաբանական բնույթի հետազոտություններում: Յեղիևակները փորձում են ներկայացնել այդ մեծ շուկայի մշակույթը, սակայն նյութը որոշ չափով “դավաճանում” է. Այստեղ իրականում ավելի երևում է տնտեսությունը, քան՝ հասարակական ու մարդաբանական մշակույթը: Այնուամենայնիվ դա լավ հնարավորություն է հաջորդ գլխին անցնելու, որը վերնագրված է “Էթնիկությունը սահմանին”:

Ցավոք, հեղինակներն այս գլուխը սկսում են էթնիկության տերմինի տեսական բացատրություններով: Սահմանամերձ գոտու հայ բնակչության էթնիկության ինքնընկալման որոշ բնութագիր տալով /ընդհանուր առաձեռն սահմաններով, որ այդ տարածքի բնակչության վերաբերմունքում միջին հայի ստանդարտ վարքից զգալի տարբերություններ չկան/, հեղինակները համաձայնվում են, որ վերջին քսանամյակի հայոց բնութագրին համապատասխանում է Ռ.Սյունու հետևյալ ընդհանուր բնութագիրը. *“Առանձնացվում է լավ ազգայնականություն Արևմուտքում, որը սովորաբար կոչում են <քաղաքացիական>, և վատ ազգայնականություն այլուր, որն էլ կոչում են <էթնիկ>: Յայտնի են ազգայնականության երկհակադիր տեսություններ, որոնցից առաջինի համաձայն ազգը հին է և նախածին, բնական և ներդաշնակ, իսկ երկրորդ՝ այժմ գերիշխող տեսության համաձայն՝ ազգերը նոր են և կառուցված: Ոմանք ազգը դիտում են ինքնաբուխ, ժողովրդական և բանահյուսական, մյուսները պատկերացնում են այն որպես վերևից ներքև կառուցվող, վերնախավի կողմից կերտվող և իշխանությունների կողմից խաղարկվող: Նրանք, ովքեր ազգը համարում են անհաղթ, հավերժ ու համեմատաբար կայուն, հակադրված են նրանց, ում համար ազգն իրավիճակային է ու մշտապես փոփոխվող”:* Իրարամերժ այս

տեսություններից Ռ.Սյունին առաջարկում է “ազգ” ընդհանրության համար ելնել հետևյալ մոտեցումից. “ազգերը ավելի հաճախ և՛ քաղաքացիական են, և էթնիկական, քան դրանցից որևէ մեկը միայն: ... քաղաքացիականը պահանջում է կայուն հանրություն, որն ինչ-որ իմաստով մշակույթն է, անգամ եթե դրա նշանները տարբերվեն էթնիկ համարվող մշակույթից”:

Դժվար է պատկերացնել, թե Ռ.Սյունուց քաղված հիշյալ տեսական ընդհանրացումն ինչպես է բնորոշում քսաներորդ դարի հայությանը: Բոլոր դեպքերում հեղինակները նախընտրել են “էթնիկություն” տերմինը “ազգայինին”, և փորձում են այն հիմնավորել ինչպես այլ երկրների սահմանամերձ տարածքների հետազոտողների կողմից ի հայտ բերված “էթնիկության” ամուր դրսևորումներով, որով փաստվում է տերմինի նպատակահարմարությունը, այնպես էլ՝ Հայաստանում քաղաքաբնակեցման ուշացման և ժողովրդավարական ինստիտուտների ավանդույթի թուլության հետևանքով քաղաքացիության և սրանից բխող “ազգային” հասարակական-մշակութային համակարգի դեռևս չկայացվածությամբ: Իմ կարծիքով միանգամայն ճիշտ ընտրված տերմինն “արդարացնելու” այս անհարկի փնտրտուքը հեղինակներին հանգեցրել է վիճելի հետևության: “Եթե նկատի ունենանք, որ Կովկասի նախկինում ամենաքաղաքայնացված երկրի՝ Յայաստանի քաղաքային բնակչության համալրումը գյուղի հաշվին մինչև 1990-ական թթ. ուներ ընդամենը երկու-երեք տասնամյակի պատմություն (Երևանում դրա կեսդարյա գործընթացի մասին տե՛ս Карапетян 1986), իսկ հետո գրեթե չի շարունակվել, ապա հասկանալի կդառնա, թե նման “նախապաշարմունք”-ները /հեղինակները “նախապաշարմունք” ասելով նկատի ունեն կենցաղային էթնիկական ավանդականությունը/ որքանով են կենսական և գործնական ողջ հայ ազգի <էթնիկության> առումով”,- գրում են հեղինակները: Եթե ընդունենք, որ “ողջ հայ ազգ” բառակապակցությունը վերաբերում է Յայաստանի բնակչությանը /թերևս Յայաստանի հայ բնակչությանը/, քանի որ “ազգային” հայերեն բառի եվրոպալեզու համաժեքները որևէ երկրի քաղաքացիների ընդհանուրությունն է, ապա գուցե կարելի է որոշ վերապահումով համաձայնել հեղինակների եզրակացությանը՝ դատելով այդ դատողության “ազգային” բառի եվրոպական ընկալումով: Սակայն հայերենում “հայ ազգն” անհամեմատ մեծ ամբողջություն է, հայերեն տեքստում առանց վերապահության “ողջ հայ ազգ” բառակապակցությունն անպայման նշանակում է “հայ էթնոս”։ Այս տարբերակով, անշուշտ, հայ էթնոսի տարբեր հատվածներ տարբեր աստիճանի “ազգային” են ինչպես հայերենի “ազգային” /էթնիկական/ ընկալումով, այնպես էլ՝ “ազգային” բառի եվրոպալեզու /քաղաքացի/ համաժեքներով /տարբեր երկրներում այդ երկրների քաղաքական ու մշակութային համակարգերին համընթաց/: Այսպիսով, հեղինակների ամփոփումը “ողջ հայ ազգի մասին” Յայաստանի հայերեն

ՔազգայինՄՆ բառի ընկալումով զգալի չափով արհեստական է, իսկ ՔեթնիկականՄՆ բառը միանգամայն արտահայտում է հեղինակների հարցադրման փնտրտուքի հնարավորությունը:

Ընդ որում պետք է շեշտել, որ նույնիսկ ազգային-քաղաքացիություն նույնարժեքության մշակույթներում էթնիկությունը օբյեկտիվորեն առկա, պահպանվող, խրախուսվող, իսկ այսօր նաև քաղաքականության մեջ նոր դերակատարում ունեցող իրողություն է, որի շուրջ ձևավորվում են իրավունքի նորմեր, գրվում և ընդունվում են միջազգային համաձայնագրեր և այլն: Կարծում եմ, որ հեղինակներն իզուր են տազնապում որոշ “հետամնացության” մեջ մեղադրվելուց, եթե նրանք արձագանքում են օբյեկտիվորեն առկա և սոցիալ-քաղաքական-մշակութային դերակատարում ունեցող խմբերի օբյեկտիվ խնդիրներին և օգտագործում են այդ օբյեկտիվ գոյությունները սահմանող տերմիններ:

Սույն գլխի ներածություն-վերլուծականում հեղինակների հետագա դատողությունները “սոցիալիստական էթնիկության” և “ձևով ազգային, բովանդակությամբ սոցիալիստական” քաղաքականության շուրջ բոլորովին ավելորդ են, քանի որ միշտ չէ, որ դրանք խանգարել կամ “օգնել” են ազգային-էթնիկական խմբերի պահպանության ու շարունակականության, կամ դրանց բովանդակային վերաձևավորումների համար: Առհասարակ միայն քաղաքական համակարգերով էթնիկական խնդիրները բացատրել անհնար և անիմաստ է: Ամենաքաղաքացիական Ֆրանսիայում անգամ, որտեղ “սոցիալիստական էթնիկության” մասին հազիվ թե կարելի է խոսել և որն առհասարակ կարելի է համարել “ազգային-քաղաքացիություն” երևույթի հիմնադիրը, հասարակության կողմից այսօր խիստ ընկալելի են էթնիկ-ազգայնական քաղաքական բառամթերք կիրառող քաղաքական գործիչները: Կարծում եմ, որ ներկա պահին Հայաստանի սահմանամերձ գոտու բնակչության որևէ վերլուծություն հանգիստ կարող է խարսխվել էթնիկության բաղադրիչի վրա առանց լրացուցիչ փաստարկների: Ավելին, գուցե նույնիսկ այս փուլում, երբ հայ-ադրբեջանական կոնֆլիկտի անունն անգամ ամբողջովին էթնիկական է, չնայած Լեռնային Ղարաբաղի կողմից բարձրացված խնդիրը կարող էր դիտարկվել ազգային-քաղաքացիական /ղարաբաղցիները Ադրբեջանի քաղաքացիներ էին/, բայց ընկալվեց և դիտարկվեց որպես բացառապես էթնիկական /Ղարաբաղի հայերի և ապա՝ աշխարհի հայերի/, այդ կոնֆլիկտի հետ սահմանամերձ բնակչության էթնիկական խնդիրն ավելի այժմեական է:

Բոլորովին պատահական չէ, որ հեղինակներն իրենք են վկայում, որ *“սահմանին խիստ անբարենպաստ՝ ադրբեջանական գյուղերի միջև սեղմված Կիրանցում հայերն սկսել են խրամատներ փորել Սումգայիթի դեպքերի մասին իմանալու հաջորդ օրը”, այսինքն հայերի արձագանքը դեպքերի ընթացքին թելադրված էր բացառապես էթնիկ փորձով: Հեղինակներն իրենք են վավերացնում, որ “անցած հակամարտությունը ազգային էր /հուսով եմ, որ հեղինակները նկատի ունեն “ազգային” բառի “էթնիկականՄՆ իմաստը/, ոչ միայն տարածքային, քաղաքական կամ այլ”:*

Այս տեսական դատողություններից հետո հեղինակները վարպետորեն ներկայացնում են սահմանամերձ գոտու բնակչության էթնիկական և մասամբ՝ սոցիալ-հոգեբանական խնդիրները: Հեղինակների նյութերը և վերլուծությունը վկայում է, որ իրենց ուսումնասիրած տարածքի բնակչության վերջին քսանամյակի կյանքն ամբողջովին, կամ համարյա ամբողջովին թելադրված էր հակամարտությանը սահմանամերձությամբ /ի տարբերություն Հայաստանի բնակչության այն հատվածների հիշողությունների և առօրյայի, որոնք և ովքեր պատերազմական գործողությունների ընթացքին տեղյակ էին հեռվից-Հ.Խ./: Հենց այս հանգամանքը զգալիորեն հիմք է հանդիսանում հարևանների հանդեպ վերաբերմունքի վերաձևավորումներին կամ, որ ավելի ճիշտ է՝ շարունակականությանը: Եթե անցյալում եղել է էթնիկ հարաբերությունների մեջ դրականացում բերող “դոստությունը”, ապա ներկայումս այն վերաճել է տնտեսական անհրաժեշտությամբ թելադրված անհատական հարաբերությունների, որոնց մեջ ընդգրկված կողմերից յուրաքանչյուրն ավելի շուտ իր էթնիկ համայնքի բարյացկամ “թողություն” անհատական գործընկերային հարաբերություններ է պահպանում դիմացինի հետ: Հազիվ թե կարելի է այս հարաբերություններում մարդկային առաքինությունների կամ մտերմության խորքեր տեսնել, որոնք կարող են դիմանալ զանազան փորձությունների: Հեղինակների նկարագրած “դոստությունը” կարող է պայթել առաջին իսկ առիթով, մինչդեռ նախկինում առանց դոստության էլ հարևան խմբերը փոխադարձաբար սատարում էին միմյանց՝ նույնիսկ իրենց բացահայտ էթնիկ հակամարտության պարագայում /ինչի հատուկենտ օրինակներ բերում են նաև հեղինակները/:

Նախորդ գլուխների ընդհանուր առևտրային հարաբերությունների քննարկումից հետո այս գլխում դիտարկվում է հայ-ադրբեջանական առևտրային հարաբերությունները:

Սովորաբար էթնիկ սահմաններ չունեցող առևտուրը հայ-ադրբեջանական սահմանամերձ գոտում ունի իր նրբությունները: Շատ լավ կլիներ, եթե քննարկվեին

նաև հայերի ու վրացիների, ադրբեջանցիների ու վրացիների՝ դարձյալ սահմանամերձ բնակչության առևտրային հարաբերությունները: Բոլոր դեպքերում հեղինակները նրբորեն ցույց են տալիս հայ հասարակությունում դեռևս որոշ արմատացածություն ունեցող երկու երևույթների ազդեցությունն այս գործունեությանը: Նախ, դեռևս որոշ հասարակական քամահրանքի է ենթարկվում բուն “առևտուր” երևույթը՝ որպես ստորադաս և մասամբ “ամոթալի” տնտեսվարում, ինչի հետևանքով առևտրականներն իրենք հասարակական “արդարացման” որոշ կարիք ունեն: Երկրորդ, դեռևս շարունակվում է մասնավոր տնտեսվարողների հանդեպ սոցիալիստական շրջանից եկող զգուշավոր վերաբերմունքը: Եթե սրանք զուգակցվում են ադրբեջանական գործընկերությամբ, ապա մասնավոր-առևտրա-տնտեսական հարաբերությունները ձեռք են բերում որոշ հասարակական լարվածություն: Այնուամենայնիվ, սրանք չեն խանգարել Սադախլոյի շուկայի հայ-ադրբեջանական առևտրա-տնտեսական գործընկերության ծաղկմանը, որը ժամանակի ընթացքում “դուրս է եկել” սահմանային գոտու բնակչության հարաբերությունների տրամաբանությունից, քանի որ դրանում ընդգրկվել էին Հայաստանի ու Ադրբեջանի խորքերի բնակչությունը նույնպես: Սահմանային առևտուրը նպաստել է գործընկերությանը, սակայն, ըստ ամենայնի, ամենևին չի ազդել էթնիկ ստերեոտիպերի վրա:

Աշխատանքը ավարտվում է “Պետությունը, գյուղը և էթնիկությունը” բաժնով, որտեղ բնութագրվում է պետության նվազագույն դերակատարությունը կարևոր սահմանային գոտում և գյուղական բնակչության ծերացումը:

Որոշ հարցեր, որոնց կարող էին պատասխանել հեղինակները, մնում են:

1. Չարմանալի է, որ սրանք չեն անդրադարձել քսան տարի առաջ այս գոտում դեռևս ապրող ադրբեջանցիների ու հայերի հարաբերություններին: Բոլոր հարցերը քննարկվում են Հայաստան-Ադրբեջան հարաբերությունների կտրվածքով, մինչդեռ Տավուշի ներկայիս մարզում ընդամենը քսան տարի առաջ կային ադրբեջանական զգալի թվով գյուղական բնակավայրեր, որոնք այս կամ այն ձևով մասնակցում էին թե՛ Հայաստանի ներքին տնտեսական կյանքին, թե՛ Ադրբեջանի հետ հարաբերություններին՝ որպես սահմանային գոտու բնակիչներ:

Սահմանամերձ գոտիներում սովորաբար խառը էթնիկ կազմի անկայությունը մշտապես այդ գոտու բնակչության մշակութային առանձնահատկությունների և

ինքնության խնդիրները “դնում են” ստանդարտից այլ հարթության վրա: Խնդիրը տեսականորեն կարող է քննարկվել ինչպես փակ սահմանների դեպքում, երբ նույնէթնիկ խմբերի տարբեր վարչական սահմաններում հայտնված հատվածները դժվարություն ունեն փոխհաղորդակցվելու, այնպես էլ բաց սահմանների, երբ ազատորեն հաղորդակցվում են ինչպես նույն էթնիկ, այնպես էլ՝ այլէթնիկ խմբերը: Կոնկրետ տվյալ տարածքը համապատասխանում էր վերջին տարբերակին ընդհուպ մինչև վերջին քսանամյակը: Խորհրդային շրջանի Հայաստանի և Ադրբեջանների միջև նույնիսկ սկզբունքային սահման չկար...

2. Չնայած հեղինակները նշում են, որ “Աշխատանքում չենք զբաղվել միայն սահմանային գոտիներին բնորոշ համընդհանուր օրինաչափությունների ու վերը հղված հետազոտություններում բացահայտված արդի միտումների տեղական առանձնահատկություններ որոնելով”, այնուամենայնիվ ուշագրավ կլիներ տեսնել, թե հայ-ադրբեջանական սահմանային գոտու փոխառնչությունների համադրելիությունը ընդհանուր օրինաչափությունների հետ ինչպիսին է:
3. Ներկայացնելով սահմանային գոտու նոր տնտեսական իրողությունները, սակավահողությունը, տնտեսական տագնապները և այլն, հեղինակները չեն խոսում հատկապես Վրաստանի հետ սահմանային գոտում՝ Նոյեմբերյանում սկսված այգեգործական նոր զարգացումների մասին: Հեղինակներն իսպառ շրջանցում են գյուղական, այդ թվում՝ դիտարկվող հատվածի բնակչության ոչ գյուղատնտեսական աշխատանքների դիապագոնը՝ ուսուցչություն, փորագրություն... դրանք քիչ, բայց առկա էին և են... Նախկինում կային նաև գործարանների ու ֆաբրիկաների մասնաճյուղեր... Բենտոնիտով պայմանավորված բնակավայր, որ այսօր բոլորովին որևէ տնտեսական հեռանկար չունի:
4. “Տնտեսական առումով դժվար է գնահատել՝ կապ կա արդյոք սահմանամերձ գյուղերի բնակչության նվազման և հողազրկման միջև”,- գրում են հեղինակները, մոռանալով հողազրկությունից կամ սակավահողությաունից զատ այլ պատճառներ փնտրել տնտեսական դժվարությունների և արտագաղթի համար, այնպիսիք, ինչպես Տավուշի մարզի անտառահատության ծավալները, դրա հետևանքով գյուղերի ջրազրկումն ու սակավաջրությունը.... Գյուղերից անտառի հեռանալը նաև

անասնապահության դժվարություն է, նաև՝ անտառային բարիքների նվազում է /հոն, մոշ, սունկ, ընկույզ... : Յեղիսակները նկատում են, որ Տավուշի մարզը նույնիսկ խորհրդային շրջանում ավելի գյուղատնտեսական էր: Այստեղի գյուղական բնակչության մեջ իրականում զգալիորեն պակասում էին արտադրական հնարավորությունները... Տավուշի մարզի տնտեսական դժվարությունների մեջ, թերևս դեր է խաղում նաև այն հանգամանքը, որ Տավուշի մարզի բնական և մոտիկ շուկան Ադրբեջանն ու Վրաստանն էին, երկուսն էլ տարբեր պատճառներով հետագայում դուրս մնացին

5. Արտագաղթի պատճառների մեջ հեղինակները դիտարկում են քաղաք-գյուղ զարգացման անհամաչափությունը և տարբերությունների խորացումը, սակայն մոռանում են նշել գյուղերի հանդեպ /ոչ միայն սահմանամերձ/ պետական քաղաքականության գործնական բացակայության շեշտումը, տնտեսական զարգացման քաղաքականության տևական բացակայությունը, կամ, որ ավելի վատ է՝ ուղղակի գյուղացիության շահագործումը /ապրանքի էժանություն, շուկաներից դուրս վանում միջնորդների կողմից..., որոնք դարձան գյուղացիության դուրս մղման պատճառներ, ինչպես նաև, անկասկած, առողջապահական և կրթական խնդիրները: Շատերը Յայաստանից մեկնում են ուղղակի նորմալ դպրոցում երեխաներին կրթություն տալու նպատակով: Արտագաղթի պատճառների մեջ վերջին տեղում չի նաև Յայաստանում առկա ընդհանուր իրավական ամենաթողությունն ու անարդարությունը:
6. Սադախլոյի շուկայում ռուբլու բացարձակ գերիշխանության մասին հեղինակների վավերացմանը կարելի է ավելացնել, որ այս կարգի շուկաներին մոտ գտնվող գոնե հայկական և վրաստանյան, ադրբեջանական ու հայկական գյուղերում նույնիսկ միմյանց միջև բնակիչներն անարգել օգտագործում էին մի քանի տարադրամ՝ դրամ, ռուբլի, մանաթ, լարի, ավելի պակաս՝ դոլար: Այդպես էր Մամեուլի, Ախալքալակի, Լոռու, Նոյեմբերյանի շրջաններում:

Պետք է կրկնեմ, որ հետազոտությունն արված է օբյեկտիվորեն: Առկա են մարդաբանների համար անակնկալ մաքուր տնտեսագիտական վերլուծություններ: Ընդհանուր առմամբ, ընթերցողին է ներկայացված վերջին քսանամյակի հայրական սահամանային գոտու բնակչության մասին մի հետազոտություն, որը տալիս է բազմաթիվ հարցերի պատասխաններ և ծնում բազմաթիվ այլ հարցեր, որոնց պատասխանները դեռ պետք է փնտրել: Կարծում եմ, որ հեղինակները ավելի շատ են տեսությանը դիմել, քան փաստական իրավիճակի նյութերին: Մի կողմից սա շահեկան է ընդհանուր օրինաչափությունների մեջ մեր զարգացումները տեսնելու առումով, մյուս կողմից՝ երբեմն տուժում է կոնկրետ նյութը, որն այդպես էլ ընթերցողին չի հասնում:

Չրանուշ Խառատյան, ազգագրագետ